ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ԳՈՂԹԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2012-2015թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄԱ[illegible] Հ.ՍԱՄՎԵԼՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ [illegible] 30.01.2012թ-ի ԹԻՎ 01 ՆԻՍՏՈՒՄ

2012թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1.Համայնքի իրավիճակի գնահատումը:
2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրերի հիմնական ցուցանիշները:

Հավելված-1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:
Հավելված-2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

## Ի՞նչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսվում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

## I.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բնակչությունը 235, Վարչական սահմանը 4971,08հա: Այն գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում՝ Եղեգիսի կիրճում, Եղեգիս գետի ձախ ափին հյուսիսարևելյան մասում: Համայնքը հյուսիսարևելքից սահմանակից է կարմրաշեն գյուղական համայնքին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ գյուղական համայնքին իսկ հարավարևմուտքից սահմանակից է Հերմոն գյուղական համայնքին:

Գյուղը մինչև 1988թ-ի աշնանը բնակեցված է եղել ադրբեջանցիներով, իսկ 1988թ-ի նոյեմբեր ամսից Ղարաբաղյան պատերազմի պատճառով բռնի տեղահանված փախստականներով գյուղը վերաբնակեցվել է հայերով: Գյուղը նախկինում անվանվել է »Ղաբախլու«,իսկ 90-ական թվականներից գյուղը վերանվանվել է »Գողթանիկ«: Գողթանիկ անունով գյուղը վերանվանվել է այն պատճառով, որ բնակչության 80%-ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար հանրապետության Գողթն գավառի /Օրդուբադի շրջան/ տարածքից: Գյուղում կա մի քանի խաչքարեր և քանդված եկեղեցի:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ. բարձրության վրա:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը զով:

Լինում են չորային և երաշտի տարիներ:

Գյուղից վերև բարձր գագաթներով սարեր են, որոց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Մշակում են մշակաբույսեր և բանջարաբոստանային կուլտուրաներ:

Զբաղվում են մանր և խոշոր եղջերավոր անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

Գյուղի հիմնական և կարևոր խնդիրը ճանապարհների, խմելու ջրի ու ոռոգման ջրի ներքին և արտաքին ցանցերի անմխիթար վիճակն է:

Գյուղի մասին հին տվյալներ չունենք:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 235 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 49%-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.երեխաներ(0-6տ.) -20
2.դպրոցական(7-17տ.) -18
3.18-62 տարեկան -93
4.թոշակառուներ -51
5.հաշմանդամներ -4
6.աշխատունակներ -70
7.միակողմանի ծնողազուրկ -0

Գյուղը ունի 123 ծուխ, որոնցից 6-ը ընգրկված են »Փարոս« համակարգում:

2012թ-ից նախատեսվում է 15 ընտանիքների տրամադրել տնամերձ հողամասեր, որով տնտեսությունների թիվը կդառնա 138 ծուխ:

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարում է համայնքի ղեկավարը (գյուղապետի) կողմից.որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:
Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով:

1.աշխատակազմի քարտուղար
2.առաջատար մասնագետ(ֆինանսիստ - հաշվապահ)
3.առաջատար մասնագետ

Աշխատակազմը բաղկացած է 4 հոգուց ավագանու անդամների թիվը 5-ն է:

Համայնքի ենթակառույցներն են՝
.Մշակույթի տուն

.Գրադարան
1.Գրադարանի և ակումբի վարիչ, 1 հոգի:

## ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1. մանկապարտեզի շենք 1 միավոր
որում տեղակայված են ներքոհիշյալ գրասենյակները

- գրադարան
- բուժկետ
- վարչական շենք
- կաթսայատուն

2.կամուրջ
3. ավտոկշեռք 1 միավոր
4. համակարգիչ 1 միավոր

## ՋՈՒՐ
## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1970թ. կարիք ունի կապիտալ վերանորոգման: Ճանապարհային ցանցը կարիք ունի վերանորոգման: Անհրաժեշտ է վերանորոգել 15կմ. ճանապարհ և փողոցներ:
Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով՝ ներքին ցանցի մաշվածության պատճառով: Գյուղը բավարարված է ոռոգման ջրով: Աղբահարությունը կատարվում է անհատական ձևով:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Համայնքում կա 122 առանձնատուն և 1 երկհարկանի բնակելի շենք:*

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- *Համայնքի վարչական տարածքը 4971.08հա*
- *Վարելահողեր 298 հա.*
- *Արոտավայրեր 424 հա.*
- *Այլ հողատեսքեր 1330 հա.*
- *Խոտհարք 241 հա.*
- *Գերեզմանոց 0.5 հա.*
- *Տնամերձ հողեր 38.5 հա*
- *Կոմունիկացիոն ենթակառուցվածքների հողեր 0.90 հա.*
- *Ջրային տարածքներ 10.77 հա.*
- *Սեփականաշնորհված հողեր 205 հա.*
- *Մեկ հողաբաժնի չափը 1.5 հա.*

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Համայնքը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ: Համայնքն ունի 150 գլուխ խոշոր և 500 մանր եղջերավոր անասուններ:*
*Գյուղում արտադրվում բանջարաբոստանային կուլտուրաներ:*
*Համայնքի վարելահողերից ոռոգելի է 10 հա.:*

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

*Գյուղն ունի 1 հիմնական դպրոց և ունի կապիտալ վերանորոգման կարիք:*
*Դպրոցում սովորում են 18 աշակերտ և 8 ուսուցիչ 4 տեխ. աշխատող*
*Անմխիթար վիճակում է գտնվում դպրոցի խմելու ջրի ցանցը:*

## ՄՇԱԿՈՒՅԹ. ՍՊՈՐՏ. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Համայնքի մշակույթի տունը տեղակայված է մանկապարտեզի շենքի 2-րդ հարկում*

*Գյուղում չկա գործող եկեղեցիներ և մատուռներ, սակայն նախատեսվում է համայնքում կառուցել նոր մատուռ մինչև ծրագրի ավարտը, որով կբարձրանա համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությունը:*

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

*Գյուղում գործում է 1 բուժկետ, որը վերանորոգվել է »Ապավեն համայնքներին« կազմակերպության շնորհիվ: Բուժկետն ունի 1 աշխատող:*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

*Համայնքը ունի երիտասարդություն որոնք կարող են կազմակերպել կրթության և դաստիարակության, մշակութային և շինարարական աշխատանքներ: Համայնքում կառուցվում են 3 միջին հզորության ՓՀԷԿ-եր, իսկ հետագայում նախատեսվում է ևս 3 հատ ՓՀԷԿ-երի կառուցում, որտեղ աշխատում են համայնքի երիտասարդները:*
*Համայնքն ունի արոտավայրեր և վարելահողեր, այդ հողերի շնորհիվ կարելի է համայնքում զբաղվել անասնապահությամբ և պահել 1000-ավոր գլուխ անասուններ:*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- *Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունների հնարավորություն:*

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- *Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:*
- *Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը ( կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց, որը կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների պատճառ):*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- *Զարգացնել անասնապահությունը և այգեգործությունը*
- *Մաքսիմում օգտագործել վարելահողերն և արոտավայրերը*
- *Համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները:*

## ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ:

## ԾՐԱԳԻՐ I
## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

*Ներածություն*
*Համայնքի ջրամատակարարման նոր համակարգը կառուցվել է 2001թ, իսկ Վարդահովիտ-Գողթանիկ ջրագիծը մնում է վերանորոգելու..*

### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս է եկել մոտ 35 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը,որը համայնքի հրատապ խնդիրներից է:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ծրագրի հիմնական նպատակներն են՝*

- Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները:
- Կանխել կեղտաջրերի ներթափանցումը՝ առաջացնող սուր վարակիչ հիվանդությունները:

*Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝*

- Ֆինանսավորման աղբյուր գտնել, 90%-ով ֆինանսավորող:
- Կազմվել է նախագիծ, նախահաշիվ, ֆինանսական խնդիրներն լուծելուց հետո հայտարարել մրցույթ, որպեսզի որոշվի շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունը:
- Ձեռք բերել նյութատեխնիկական միջոցներ:

### ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը կապահովվի շուրջօրյա ջրով, կնվազի ջրի կորուստները, կբարելավվի բնակչության սոցիալ-տնտեսկան պահանջները:

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 3կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և 1հատ օրվա կարգավորման ջրամբարների կառուցման աշխատանքների համար արժեքը կկազմի 30000000 դրամ:

## ԾՐԱԳԻՐ 2

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

*Համայնքի մանկապարտեզը կառուցվել է 1970-1975թթ., որը կառուցման օրվանից մինչև օրս վերանորոգման չի ենթարկվել:Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ փթարային լինելու և երեխաներ քիչ լինելու պատճառով մանկապարտեզը չի գործում:*

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ծրագրի հիմնական նպատակներն են՝*

- *Լավ հիմքերի վրա դնել մատաղ սերնդի դաստիարակության գործը.*

*Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝*

- *Կնքել համաձայնագիր »Փրկեցեք երեխաներին«.»Սոց.ներդրումների հիմնադրամ« կազմակերպությունների հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 80%-ը կհատկացվի հիմնադրամների կողմից, իսկ 20%-ը՝ համայնքի կողմից:*
- *Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ.*
- *Կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը:*

## ԾՐԱԳԻՐ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

*<u>Ներածություն</u>*

*Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 15կմ. որից կենտրոնական ճանապարհն է 5կմ.: Գյուղի բնակչության դիմումները ընդառաջելով, սույն ծրագրով առաջարկվում է լուսավորել եվ բարեկարգել կենտրոնական ճանապարհը և բարեկարգել մյուս ճանապարհները:*

*<u>Ծրագրի հիմնական նպատակներն են՝</u>*

- *Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ,տարվա բոլոր եղանակներին*
- *Վերացնել փողոցների ջրահոսքերը:*

*<u>Ծրագրի խնդիրը՝</u>*

- *ծրագիրը կիրականացվի համայնքի բյուջեի հաշվին.*
- *Կատարել ավազի,խճաքարի և կավի խառնուրդի փռում փողոցներում՝ ապագայում նախատեսել ասֆալտապատման աշխատանքներ:Աշխատանքները կազմակերպել 2012-2013թթ. ընթացքում:*

## ԾՐԱԳՐԻ 4

*Մշակույթի օջախի վերանորոգում*

*<u>Ծրագրի նկարագիրը՝</u>*

*Գողթանիկի մշակույթի տունը շահագործման է հանձվել 1970-1975թթ : Շենքը պետք է կապիտալ վերանորոգել:Պետք է կատարվեն նաև ներսի հարդարման աշխատանքներ:*

## 5.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Վայոց Ձորի մարզի Գողթանիկ համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

| | Եկամուտի տեսակը | 2010թ. փաստ. | 20011թ.նախա-տեսված | 2012թ. կանխա-տեսված | 2013թ. կանխա-տեսված | 2014թ.կանխա-տեսված | 2015թ. կանխա-տեսված |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ | 5172600 | 5233000 | 5220000 | 6000000 | 7000000 | 7000000 |
| Ա | Հարկային եկամուտներ | | | | | | |
| 1. | Հողի հարկ | 343000 | 343000 | 415000 | 500000 | 500000 | 500000 |
| 2. | Գույքահարկ | 40000 | 40800 | 41000 | 50000 | 60000 | 60000 |
| Բ | Տեղական տուրքեր | 10000 | 10000 | 10000 | 15000 | 20000 | 20000 |
| Գ | Ոչ հարկային եկամուտներ | | | | | | |
| 1 | Հողի վարձավճար | 572600 | 750000 | 1264000 | 1300000 | 1500000 | 1500000 |
| 2 | Պետ պատվիրակված լիազորությունների իրականացման համար ստացվող միջոցներ | 600000 | 600000 | – | | | |
| 3 | Իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտներ | | | | | | |
| Դ | Եկամուտների կապիտալ գործառնություններից | | | | | | |
| Ե | Պաշտոնական տրանսֆերտներ | | | | | | |
| 1 | Դոտացիա | 3500000 | 3500000 | 3500000 | 3500000 | 3500000 | 3500000 |
| 2 | Այլ աղբյուրներից պաշտոնակ. տրանսֆերտ | | | | | | |
| Զ | Տարեսկզբի ազատ մնացորդ.վարչական | 37148 | 65670 | 78000 | | | |
| | ֆոնդային | 2305342 | 3167242 | 3544400 | | | |

# ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| | Ցուցանիշները | Չափի միավոր | 2010թ.փաստ | 2011թ. փաստ | 2012թ. կանխ. | 2013թ. կանխ. | 2014թ. կանխ. | 2015թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքը | հա | 2492,4 | 4971,08 | 4971,08 | | | |
| 2 | Բնակչության թիվը | 235 | 235 | 236 | 236 | 236 | | |
| 3 | Ծնունդը | մարդ | 2 | 3 | 2 | | | |
| 4 | Մահացությունը | մարդ | 2 | 2 | 2 | | | |
| 5 | Աշխ.ռեսուրսները,այդ թվում՝ | մարդ | 30 | 25 | 25 | 25 | 30 | |
| | ա.զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի | մարդ | 70 | 65 | 60 | 55 | 55 | |
| 6 | Գործազրկության մակարդակը | % | 30 | 25 | 25 | 20 | 20 | |
| 7 | Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը | հատ | 1 | 1 | 2 | 3 | 4 | |
| 8 | Պահուստային հողերը | հա | | | | | | |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակը | % | | | | | | |
| 10 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի հողեր | կմ | | | | | | |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | կմ | 3,5 | 3,5 | 3,5 | 8,5 | 8,5 | 8,5 |
| 12 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | 10 | 10 | 10 | 15 | 15 | 15 |
| 13 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկար.-ը | կմ | 15 | 15 | 15 | 17 | 17 | 17 |
| 14 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկար.-ը | կմ | 15 | 15 | 13 | 11 | 9 | 5 |
| 15 | Մասնավոր բնակ.ֆոնդ | | | | | | | |
| 16 | Բնակկարիքավոր ընտանիքների թիվը | հատ | 15 | 15 | 15 | 10 | 5 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | l/օր | | | | | | |
| 18 | Ջրի կորուստները ցանցում | | | | | | | |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում | մարդ | 20 | 20 | 18 | 20 | 20 | 22 |
| 20 | Երեխաների թիվը մանկապարտեզում | մարդ | - | - | - | | | |
| 21 | Գյուղապետարանի և ենթակառուցվածքի աշխատողների թիվը | մարդ | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |